

ԱՆՅՅԱԼ ԴԵՐԱՅԸ ԵՎ ՆՐԱ ՁԵՎԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱՐԱՐՈՒՄ

Բ. Ս. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Գրաբարում անցյալ դերբայը շատ հաճախադեպ բայաձև է: Իր հաճախականությամբ այն զիջում է միայն անորոշ դերբային: Բայց կան բայեր, որոնք անցյալ դերբայ չունեն: Օրինակ՝ գոլ, պարտիմ, գոգ բայերը: Բոլոր դեպքերում անցյալ դերբայը գործածությամբ մի քանի անգամ գերազանցում է ապառնի և ենթակայական դերբայներին՝ միասին վերցրած:

Գրաբարի անցյալ դերբայը աչքի է ընկնում իր ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններով: Այն կազմվում է և՛ ներկայի, և՛ անցյալ կատարյալի հիմքերից: Այսպես՝ ա խոնարհման բոլոր բայերը, լինեն պարզ թե ածանցավոր, անցյալ դերբայը կազմում են անցյալ կատարյալի հիմքից: Օրինակ՝ աղաւմ—աղացեալ, աղաւտանամ—աղաւտացեալ, իմանամ—իմացեալ, ստանամ—ստացեալ, կարօտանամ—կարօտացեալ, բանամ—բացեալ և այլն:

Ածանցավոր որոշ բայերի անցյալ դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից: Օրինակ՝ գտանեմ—գտեալ, անկանիմ—անկեալ, դառնամ—դարձեալ, լուցանեմ—լուցեալ, առնում—առեալ, ընկենում—ընկեցեալ և այլն:

Բոլոր տարահիմք բայերի անցյալ դերբայը նույնպես անցյալ կատարյալի հիմքից է կազմվում: Ուտեմ—կեւեալ, գամ—եկեալ, ունիմ—կալեալ, առնեմ—աւարեալ (տարահիմք չէ, բայց շատ է հեռացել), ըմպեմ—արեալ, լսեմ—լուեալ (կա նաև լսեալ):

Բացառություն է կազմում միայն երբամ բայը, որի անցյալ դերբայը երբեալ է (փին. չոգեալ-ի):

Ա խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի և ներկայի հիմքերը չեն զանաղանվում: Բոգում—բոգի—բոգեալ, հեղում—հեղի—հեղեալ: Ուստի, պետք է ենթադրել, որ ու խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայը անցյալ կատարյալի հիմքից է կազմվում:

Ե և ի խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայը հիմնականում կազմվում է ներկայի հիմքից: Ինչպես՝ գրեմ—գրեցի—գրեալ (կա նաև գրեցեալ), կառարեմ—կառարեցի—կառարեալ, վկայեմ—վկայեցի—վկայեալ, կազմեմ—կազմեցի—կազմեալ (կա նաև կազմեցեալ), սլաղարեմ—սլաղարեցի—սլաղարեալ և այլն:

2. Աճառյանը իր գլխակատար քերականության մեջ բերում է Մարիեսի հետևյալ կարծիքը (առանց մեկնաբանման). «Եմ, իմ լծորդության բայերն մի մասի դերբայը կազմվում է -եցեալ մասնիկով՝ փոխանակ -եալ, ուր եա մասը կրկնված է երկու անգամ (սիրեցեալ սէր-եա-ց-եալ): Անշուշտ այն ժամանակ. երբ կազմվում էին այս ձևերը, այս -եց մասնիկի մեջ զգալի չէր is-ը»:

Այնուհետև 2. Աճառյանը գրում է. «Ի՞նչ պատճառով դերբայի մեջ ներմուծվեց սահմանականի ց ձայնը. անշուշտ՝ գլխավորապես տարբերություն դնելու համար ներգործական և կրավորական ձևերի միջև: Եմ և իմ լծորդության բայերի հրամայականը լինում է ներգ. սիրեա՛լ, կրա՛վ. սիրեաց, որոնց մեջ կրավորականի նշանն է ց, որից զուրկ է ներգործականը: Լեզուն

վերցրեց հենց այս զանազանությունը և կազմեց նրա միջոցով՝ սիրեալ, իբր «սիրած» և սիրեցեալ, իբր «սիրված»²:

Մեր կարծիքով, անցյալ դերբայը, իբրև կանոն, պետք է կազմվեր անցյալ կատարյալի հիմքից: Բայց անհրաժեշտ է բացատրել նաև, թե ինչպես եղավ, որ —եմ, —իմ վերջավորվող բայերի անցյալ դերբայը կազմվեց ներկայի հիմքից: Նախքան այդ հարցին պատասխանելը ասենք, որ «ց» հնչյունը կրավորականի նշան չէ, այսինքն՝ սիրեա՛լ չի նշանակում սիրի՛ր, սիրեա՛ց՝ սիրվի՛ր, ինչպես որ կարծում է Մարիեսը: Եթե ց-ն այդպիսի նշանակություն ունենար, ապա բոլոր պատճառական բայերը ց-ով չէին կազմվի (օրինակ՝ լցուցանեմ, կեցուցանեմ, կացուցանեմ):

Այնուհետև, քանի որ հազարավոր բայերի անցյալ դերբայը սեռը չի զանազանում, հետևաբար, այդ մի քանի դերբայի զանազանությունը չէր կարող լուծել գրաբարի բայական սեռի հարցը: Եթե մտովի պատկերացնենք, թե գրաբարը որքան բայական ձևեր ունի, որոնք սեռերը չեն զանազանում, ապա այդ մի քանի տասնյակ բայերի համար նման բացատրությունը միակողմանի կլինի:

Այժմ անդրադառնանք մեր առաջ քաշած հարցի պատասխանին. ինչպե՞ս եղավ, որ —եմ, —իմ բայերի անցյալ դերբայը չպահեց իր ծագման հիմքը: Չէ՞ որ նույն —եմ և —իմ խոնարհման ածանցավոր բայերը պահեցին իրենց ծագման հիմքը (անցյալ կատարյալի): Օրինակ՝ արկանեմ—արկեալ, բեկանեմ—բեկեալ, լքանեմ—լքեալ:

Ամենից առաջ դրան նպաստեց հենց սէր-եա-ց-եալ և դրա նման վանկերի լեզվաբանական ամփոփման օրենքը, երբ եա+եա կամ ե+ե վանկերից մեկը պետք է վերանար այդ օրենքով: Կար մի հանգամանք ևս՝ —ե խոնարհման ածեմ, բերեմ, հանեմ, հեղուսեմ, համբերեմ պարզ բայերի անցյալի հիմքը ցոյական չէ: Համարանություն օրենքի համաձայն՝ նման մյուս բայերն էլ են թողնում իրենց —եց վանկը: Ոչ միայն ե, այլև ու խոնարհման բայերը ևս (օրինակ՝ թողեալ, առեալ, հեղեալ, գեղեալ, արգելեալ) կարող էին նույն օրենքի համաձայն —եցեալ-ը դարձնել —եալ:

Տեսնենք, թե որչափով է —եալ-ով վերջավորվող դերբայը ներգործական, իսկ —եցեալ-ովը՝ կրավորական:

Ա. Աբրահամյանը գրում է. «Այս դերբայի —եալ մասնիկը ընդհանուր է բոլոր սեռերի համար: Ներգործական սեռի բայերն այս դերբայում ընդհանուր նշանակություն ունեն: Սրանք ևս, հասարակ (deponens) բայերի նման, մի ձևով ունենում են և՛ ներգործական, և՛ կրավորական նշանակություն: Սակայն քիչ չէ այն քերականների թիվը, որոնք աշխատում են ներգործական և կրավորական սեռերի միջև անցյալ դերբայում ձևական տարբերություն տեսնել: Նրանք որոշակիորեն անշատում են (ըստ ձևի) այդ սեռերի դերբայը: Կրավորական սեռի համար դերբայը վերցնում են —եց բաղադրիչով...»

Այս բայերի անցյալ դերբայը —եց բաղադրիչով, իհարկե, կարող է լինել, բայց այն միայն կրավորական սեռ համարելը սխալ է³:

Այժմ Եզնիկի օրինակների միջոցով պարզենք Մարիեսի կարծիքի սխալը, որը գալիս է XVII—XVIII դարերի քերականների Գալանոսից, Հովհաննես Հոլովից և Մխիթար Սեբաստացուց:

Մինչև օրինակներ բերելը ասենք, որ —եց բաղադրիչով կազմված դերբայների մի մասը չեղոք սեռի բայեր են՝ անեցեալ, մեղկեցեալ, հայեցեալ, նայեցեալ: Ուրեմն, սրանք չեն կարող կրավորական լինել, հետևաբար, —եցեալ-ով անցյալ դերբայի կրավորական լինելու տեսակետը ինչ-որ չափով ժխտվում է:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Ա. Աբրահամյան. Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը. Երևան, 1953, էջ 170—171:

Բայց Եզնիկն ունի —եցեալ-ով ներգործական սեռի բայեր. այսպես՝ «Եւ սրբովք աղաչեցեալ զԱստուած» (87)⁴։ «Բայց նա տեսանեմք աւանիկ՝ զի ոչ զնոսա միայն, այլ և զվիշապս և զգազանս և զխաւար և զփայլատակունս, զոր ի շարէ դնեն, ի նոյն փառատրութիւն նորին Հոգւոյ կոչեցեալ» (195)։ «Եւ անսաստութիւնն ոչ եթէ անձնաւոր ինչ յառաջագիտ եհաս ի գիտութիւնն սատանայի. այլ իբրև զմի ինչ եղեալ ի դիպաց կամեցելոյն» (51)։

Միայն խաբեցեալ դերբայը երկու անգամ է գործածել Եզնիկը, և երկուսն էլ կրավորական։ «Այլ ի մարդկանէ եղեալ թելադրութեամբ սատանայի ի հնազանդելոցն նորա և ի խաբեցելոց» (51)։ «Հանցուք զնա յայաց իւրոցն խաբեցելոց» (241)։

Ղազար Փարպեցին նույնպես գործածել է —եց բաղադրիչով անցյալ դերբայներ. ինչպես անեցեալ (նաև անեալ), բոլեցեալ, ամաչեցեալ, հայեցեալ, իշխեցեալ, որոնցից անեցեալ, բոլեցեալ, ամաչեցեալ, հայեցեալ չեզոք են, իշխեցեալ չեզոք եղանակավորիչ է, իսկ կոչեցեալ, ատեցեալ, գրեցեալ, սիրեցեալ, խօսեցեալ, կարծեցեալ՝ ներգործական։

Կոչեցեալ-ը գործածված է ինը անգամ, որից միայն մեկն է ներգործական, իսկ ութը կրավորական են։ Բերենք միայն ներգործականի օրինակը. «Յառաջ կոչեցեալ թագաւորին զիշխանն Սիւնեաց Վասակ» (84)⁵։ Ատեցեալ-ը կրավորական սեռով է գործածված. «Ատեցեալք յամենայն սրբասէր մարդկանէ» (167)։ Գրեցեալ-ը կարող է մտածվել և՛ ներգործական, և՛ կրավորական։ «Եկեալ նստիցի լստ գրեցելում։ Ըստ գրեցելումն ի վեշտասաներորդումն սաղմոսին։ Զիրս ամենայն լստ գրեցելոցն ի հրովարտակէն թագաւորին՝ նմա յանձն առնէր» (36, 41, 73)։ Սիրեցեալ ներգործական է. «սիրեցեալ զխստամբերութիւն» (109)։

Խօսեցեալ դերբայը գործածված է քսաներկու անգամ, որից տասնհինգ օրինակում գոտ ներգործական է, իսկ մյուսներում կարելի է բացատրել և՛ ներգործականով, և՛ կրավորականով։ Օրինակ՝ «Թարգմանեաց զկտակարանս ամենայն զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք» (17)։ «Ոչ իշխեմ ես զխօսեցեալս առն... երկրորդել առաջի ձեր» (115)։ Մյուս բայերը ևս գործածված են ներգործական և կրավորական սեռերով. օրինակ, Փարպեցին կարծեցեալ-ը տասներկու անգամ է գործածել, որոնց մի մասը ներգործական, մյուսը կրավորական է։

Ուրեմն, V դարում այդ երկու ձևերի մեջ ներգործական և կրավորական սեռերն առանձնացնելը սխալ է։ Լեզվական փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միևնույն ձևը կարող է ունենալ և՛ ներգործական, և՛ կրավորական նշանակություն։

Այստեղ գուցե դեր ունենա նաև իմաստային կողմը։ Այդ բանը կարող ենք պնդել երկու բայի համար՝ նեջեալ—նեջեցեալ, խօսեալ—խօսեցեալ։ Թեև նեջեալ ձևը մեծ մասամբ արտահայտում է «քնած» իմաստը, իսկ նեջեցեալ-ը՝ «մեռած», բայց դա ևս բացարձակ կանոն չէ, քանի որ կան շեղումներ։ «Եթէ չիցէ նեջեցեալ ընդ քեզ առն» (Թիւք, Ե. 19)⁶։ «Բազում մարմինք նեջեցելոց սրբոց յարեան» (Մատթ., Իէ 52)։

Այսպես չէ հարցը խօսեալ-ի և խօսեցեալ-ի միջև. խօսեալ նշանակում է «նշանած», իսկ խօսեցեալ՝ «խոսած»։ Ա. Աբրահամյանը դրում է. «Խօսիմ» բայի անցյալ դերբայը ներկայի հիմքով (խօսեալ) նշանակում է նշանած (աղջիկ). հիմտ. «Քանզի յորժամ խօսեալ լինի կին առն՝ հեռի ի նմանէ տեսութեամբ...»։ «Դարձեալ որպէս չէ օտար փեսայն կուսին՝ որ խօսեալն իցէ նմա»

⁴ Ե զ ն ի կ Կ ո ղ բ ա ց ի. Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826 (այս և հաջորդ բոլոր մատենագիրների օրինակները բերվում են տողատակում նշված հրատարակությունից, փակագծով արվում է նախադասության էջը)։

⁵ Ղաղարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան. Տիգրիս, 1904 թ.։

⁶ Աստուածաշունչ—Գիրք Աստուածաշնչի Հին և Նոր կտակարանաց. Վենետիկ, 1860։

(Համբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս..., Վենետիկ, 1847, էջ 122—123), իսկ կատարյալի հիմքով (խօսեցեալ)՝ խոսած, խոսելով⁷։

Ա. Աբրահամյանը այս օրինակները վերցրել է XII դարի հեղինակ Համբրոնացուց։ Մինչդեռ V դարում, օրինակ, Փարպեցին խօսեալ դերբայը գործածել է, բայց ոչ մեկը նշանած իմաստը չունի։ «Առաւել ևս քան զսոյն բանս աղանաց խօսեալ», «Եւ խօսեալ զայս ամենայն բանս տեառն Արեաց Վաղարշու», «Զօր քո խօսեալ է ընդ մեզ», «Խորհեալ էր մեր և խօսեալ» (27, 160, 133, 81)։ Նույն իմաստով նաև խօսեցեալ դերբայը, այսինքն՝ խօսեալ-ի և խօսեցեալ-ի միջև իմաստային տարբերությունն չկա։

V դարում ավելի հաճախ գործածվում է -եցեալ մասնիկով դերբայը։ Օրինակ՝ «Որում խօսեցեալ Մարիամ կոյս» (Մատթ. Ա. 16)։

Անցյալ դերբայի մասին այս պնդումները, թե եցեալ-ով կազմվածները կրավորական են, իսկ առանց -եց-ի կազմվածները ներգործական, կամ թե դրանց մեջ իբր իմաստային զանազանություն կա (նշեալ—նշեցեալ), կարելի է ոչ հիմնավոր համարել։ Այդպիսի պնդումները ըստ Աբրահամյանի՝ գալիս են XVII դարի քերականների Գալանոսից և Հովհաննես Հոլովից։ Ա. Աբրահամյանը գրում է. «Գալանոսի մոտ՝ ներգործական սեռի համար՝ գովեալ, կրավորականի համար՝ գովեցեալ... Հովհաննես Հոլովի մոտ՝ ներգործական՝ սիրեալ, կրավորական՝ սիրեցեալ։ Վերջին օրինակները նույնությամբ կրկնում է Մխիթար Սեբաստացին։ Նման օրինակներ կարելի է գտնել նաև Սկրոդերի մոտ»⁸։

Եղնիկը -ե և -ի խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայը կազմում է ներկայի հիմքից. ինչպես՝ դեղեմ—դեղեալ, հաւառեմ—հաւառեալ, վառեմ—վառեալ, բնակիմ—բնակեալ, պառաւիրեմ—պառաւիրեալ, ազգնապիմ—ազգնապեալ և այլն։

Բացառություններ են՝ խաբիմ—խաբեցեալ, աղաչեմ—աղաչեցեալ, հայիմ—հայեցեալ, կռչեմ—կռչեցեալ, կամիմ—կամեցեալ, նայիմ—նայեցեալ։

Ինչպես երևում է Եղնիկի օրինակներից, անցյալ կատարյալի հիմքից առավելապես կազմված են կրավորական բայերը. ինչպես՝ խաբեցեալ, կռչեցեալ (կա նաև ներգործական), կարծեցեալ։ Ներգործական են նաև աղաչեցեալ, կամեցեալ բայերը, իսկ հայեցեալ, նայեցեալ բայերը չեզոք են։ Իսկ Այոբնյանը գտնում է, թե հիշյալ բայերը անցյալի հիմքից են կազմվում առավել, երբ հոլովված են, այսինքն՝ թեք հոլովածները⁹։ Եղնիկի տվյալներով այդ ենթադրությունը ժխտվում է։ Նրա վեց բայերից միայն խաբեցեալ-ն ու կամեցեալ-ն են հոլովված, իսկ չորսը՝ աղաչեցեալ, նայեցեալ, կռչեցեալ, նայեցեալ ուղիղ ձևով են։

Այս պնդումները չեն ելնում հայոց լեզվի ընձեռած փաստերից։ Դրանք կամ ենթադրություններ են, կամ օտար քերականությունների կողմնորոշմամբ գրված երկերի տվյալներից հանված պնդումներ. կամ որևէ այլ պատահական տվյալի արդյունք։

Այսպես է նաև իմաստային զանազանության վարկածը, որ նույնպես անփաստ եզրակացություն է։ Իրականն այն է, որ անցյալ դերբայը ըստ օրինաչափության կազմված է եղել անցյալ կատարյալի հիմքից, հետագայում ինչ-ինչ գործոնների ազդեցության տակ այս դերբայի անցյալի հիմքի -եց-մասնիկը ընկել է, և մնացած մասը նմանվել է ներկայի հիմքին։ Անկմանը նպաստել են նույնանման վանկերը (սիր-եաց-եալ, սիրեցեալ), -ե խոնարհման մի քանի բայերի անցյալի հիմք չունենալը (ածեմ, բեռեմ, հաճեմ, հեղուեմ, համբեռեմ), ու խոնարհման բայերի (թողում—թողեալ, հեղում—հեղեալ, առնում—առեալ, զեղում—զեղեալ և այլն) և՛ անցյալի, և՛ ներկայի

⁷ Ա. Աբրահամյան. Եզվ. աշխ., էջ 163—169։

⁸ Նույն տեղում, էջ 171։

⁹ Վ. Զալըխան, Ա. Այտընեան. Քերականութիւն հայկազնեան լեզուի. Վիեննա, 1885, էջ 71։

հիմքերի նույնությունը: Եվ ձևաբանական առնմանության օրենքի համաձայն՝ -ե խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայները իրենց անցյալի հիմքը ձևափոխել են: Իսկ այն բայերը, որոնք պահպանել են իրենց հիմքը, պարզապես քերականական բացառություններ են: Այս ճանապարհին կամ լեզվական մի այլ օրինաչափություն դադարեցրել է այդ ընթացքը, և կամ օրինաչափությունը լիակատար կերպով չի վերացել: Տվյալ դեպքում -ե և -ի խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայի հիմքի քայքայումն իր լրիվ ավարտին չի հասել: Ընդհակառակը, եթե V դարում անցյալ դերբայի անցյալի հիմքը լրիվ վերանալու ճանապարհին էր, ապա հետագայում այդ հիմքով անցյալ դերբայը սկսեց մեծ զարգացում ապրել: Այն, որ անցյալ դերբայի -եց հիմքով կազմությունը միայն կրավորական սեռ չի արտահայտում, ինչպես ցույց են տալիս փաստերը, միայն V դարին չի վերաբերում:

Հետագա դարերի լեզվական երևույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկու հիմքերի կազմության զանազանությունը քերականական սեռի հարցում ճիշտ է եղել: Սեբաստացու և մյուսների այն պնդումը, թե -ե խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայի կազմությունը անցյալ կատարյալի հիմքից արտահայտում է կրավորական սեռ, իսկ նույն դերբայի ներկայի հիմքից կազմությունը՝ ներգործական սեռ, ճիշտ է հետագա դարերի համար. որովհետև հետագա դարերի լեզվական փաստերը Սեբաստացու և մյուսների օգտին են խոսում:

Մեր աշխատանքը շատ շնորաբեռնելու համար շատ հեղինակների շնք դիմում: Մեր միջնադարյան գրականությունից վերցնում ենք Գրիգոր Նարեկացու գործածած անցյալ դերբայի տվյալները:

Նախ ասենք, որ Նարեկացին անցյալ դերբայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերը ընդարձակել է: Եզնիկ Կողբացու համեմատ Գրիգոր Նարեկացին մի քանի անգամ ավելի կատարյալի հիմքից կազմված անցյալ դերբայով բայաձևեր է գործածել:

Աճառյանը -ե և -ի խոնարհման պարզ բայերի անցյալ դերբայի կատարյալի հիմքից կազմված լինելու կապակցությամբ բերում է Մարիեսի սահմանած կանոնը: Ըստ որի՝ «...-եցեալ ձևով դերբայ ունեցող բայերից շատը հանգում է -լեմ, -լեմ, -եմ, -լեմ (-լիմ, -լիմ, -եիմ, -լիմ), և անշուշտ ձայնապես ավելի հեշտ էր յ, չ, և, զ բաղաձայնները կցել -ե ձայնավորին, քան թե -իա երկբարբառին (աւ-եալ, աւ-եցեալ)»¹⁰: Մարիեսը այս կանոնը եզրակացրել է՝ հենվելով աւեմ, ճալիմ, ճալիմ, ճեջեմ, աղալեմ, ամալեմ բայերի աւեցեալ, ճալեցեալ, ճալեցեալ, ճեջեցեալ, աղալեցեալ, ամալեցեալ ձևերի վրա. որոնց գոյությունը լեզվում ոչ մի կապ չունի հիշյալ կանոնի հետ, որովհետև բացի դրանցից այդպիսի ձևեր ունեն խաբեմ—խաբեցեալ, կամիմ—կամեցեալ, խօսիմ—խօսեցեալ, պաշեմ—պաշտեցեալ, սրբեմ—սրբեցեալ, պահեմ—պահեցեալ, շնորհեմ—շնորհեցեալ, ճեղազեղեմ—ճեղազեղեցեալ, իշխեմ—իշխեցեալ բայերը: Գուցե վերոհիշյալ կանոնը սրղարանա միայն ճալիմ և ճալիմ բայերի համար: Մնացածի համար այդ կանոնը դեր չունի, մանավանդ որ հիշյալ բայերից շատերը անցյալ դերբայը կաղմում են նաև ներկայի հիմքից՝ աւեալ—աւեցեալ, ամալեալ—ամալեցեալ, ճեջեալ—ճեջեցեալ և այլն:

Փաստերը ցույց են տալիս, որ անցյալի և ներկայի հիմքից կազմված դերբայները V դարում ո՛չ սեռով, ո՛չ էլ նշանակությամբ միմյանցից չէին զանազանվում: Բայց V դարից հետո այդ վիճակը սկսել է փոխվել: Հիշենք, որ V դարում -ե և -ի խոնարհումները փաստորեն անորոշ դերբայի համար ևս առանձին ձևեր չունեին, բայց դրանից հետո առաջանում է այդ դերբայի կրավորական ձևը, և ստացվեցին ներգործականի համար՝ -ել, կրավորականի համար՝ -իլ վերջավորությունները: Սեռային զանազանությունը ըստ ձևային ցուցի, ինչպես երևում է, V դարում սաղմնային վիճակում էր, այսինքն՝

լեզուն այդպիսի ցուցի պահանջ էր ներկայացրել անորոշ և անցյալ դերբայ-ների համար, և, շատ շանցած, դրանք առաջացան:

Նարեկացին —ե և —ի խոնարհման բայերի համար անցյալ դերբայի անցյալի հիմքերից կազմված ձևերը գործ է ածում կրավորական սեռը զանազանելու նպատակով: Հետաքրքրական է, որ մի ձևին զուգահեռ գործածվում է նաև մյուս ձևը, և անցյալի հիմքից կազմվածը՝ անպայման կրավորականի համար. օրինակ՝ «Ո՛վ այր անմաքուր, ամբարիշտ և ծոյլ, բնաւին առեցեալ» (111)¹¹, «Եւ դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ» (193): «Ընդ խաչեցելոյն ընդ քեզ պաղատիմ» (105): «Արդեօք տեսի՞ց զբիրակործան զվնասեցեալս անօթ կազմեցեալ» (60): «Տգեղս ցուցեալ զիս ամենեկին իբրև մերկացեալ խայտառակեցելոյ պոռնըկի» (45):

Սակայն անհրաժեշտ է նշել, որ անցյալի և ներկայի հիմքից կազմված ձևերը դեռ հստակորեն չեն տարրորոշված: Եթե անցյալի հիմքից կազմված ձևերը ներգործական սեռով հազվադեպ են գործածվում («Այցելութիւն խընդորոցս դիցի քո ընաւեցեալ վեհ արքայորդուն», 119), ապա ներկայի հիմքից կազմված ձևերը և՛ ներգործական են, և՛ կրավորական, ընդ որում կրավորականը քանակով չի զիջում ներգործականին: Եվ հետո, անցյալի հիմքից կազմված ձևերը Նարեկացին գործ է ածում նաև շեղոքների համար: Օրինակ՝ բերկրեցեալ, գարշեցեալ, երևեցեալ, թմբեցեալ, ժամանեցեալ, խաւաւեցեալ, խռովեցեալ, ծաղկեցեալ, կանգնեցեալ, յարակայեցեալ և այլն:

Նարեկացին —ե և —ի խոնարհման բայերի անցյալ դերբայի հարյուր քսանյոթ օրինակ ունի՝ անցյալի հիմքից կազմված, որոնց գոյությունը աներևակայելի է V դարում: Ահա դրանցից մի քանիսը՝ բմբռնեցեալ, վերագրեցեալ, գայթակեցեալ, խայտառակեցեալ, ճաշակեցեալ, լամառեցեալ, ռդեցեալ, տարակուսեցեալ, տեսանագրեցեալ, տրամեցեալ, օրինակեցեալ և այլն:

Այս նշանակում է, որ X դարում արդեն երկու հիմքից կազմված անցյալ դերբայները հավասարապես գործածվում են՝ անցյալի հիմքից կազմված ձևը՝ կրավորական, նաև շեղոք բայերի համար, իսկ ներկայի հիմքից կազմված ձևը՝ բոլոր սեռերի համար:

Չմոռանանք նաև, որ հավանաբար Նարեկացին եց հավելադիր վանկը՝ տարժանեցեալ, պաշտեցեալ, բերկրեցեալ, բժշկեցեալ, ընծայեցեալ, կապաեցեալ, վարանեցեալ (բոլորն իր գործածածներն են) օգտագործել է չափածոյի վանկաքանակը լրացնելու համար:

Ուրեմն, եզրակացնենք. անցյալ դերբայը լեզվի հնագույն շրջանում կազմված է եղել անցյալի հիմքից: Հետագա դարերում ձևաբանական առնմանության օրենքի համաձայն աստիճանաբար եց բաղադրիչը ընկել է, և դերբայի ձևը նմանվել է ներկայի հիմքին: Անցյալ դերբայը V դարում ընդհանուր է, և կրավորականի ու ներգործականի համար առանձին ցուցիչ չկա:

Հետագայում, ինչպես որ անորոշ դերբայի կրավորականի համար առաջացավ —իչ ձևը, այնպես էլ —եցեալ և —եալ հիմքերը սկսեցին զանազանվել՝ մեկը կրավորականի համար, մյուսը՝ ներգործականի, սակայն դրանք ամբողջովին չսահմանազատվեցին: X դարում դեռևս —եալ-ով ձևերը հավասարապես ներգործական և կրավորական իմաստ ունեն, իսկ —եցեալ-ով ձևերը՝ կրավորականի և ներգործականի: Ուստի, XVII դարի քերականների այն կարծիքը, թե —եցեալ-ով կազմվածները կրավորականի ձևեր են, թեև V դարի լեզվական փաստերին չի համապատասխանում, այնուամենայնիվ, ճիշտ է հետագա դարերի համար:

¹¹ Մատեն օղորդութեան ս. Գրիգոր Նարեկացիի. Պուլենոս Այրէս, 1948.

ПРИЧАСТИЕ ПРОШЕДШЕГО ВРЕМЕНИ И ЕГО МОРФОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ В КЛАССИЧЕСКОМ ГРАБАРЕ

Т. С. ШАХВЕРДЯН

Резюме

Причастия прошедшего времени, в соответствии с закономерностями глагольной системы грабара, должны были, как правило, образовываться от основы перфекта, однако это правило нарушается при образовании причастий прошедшего времени от простых глаголов спряжения на *-em* и *-im*, которые производятся от основы презенса. По нашему мнению, здесь действует закон галлологии, в соответствии с которым в *uḡr-kw-g-kw-l* и *uḡr-kw-g-kw-l* и подобных формах произошло соединение сходных слогов *kw+kw* или, точнее, выпадение одного из них, что привело к образованию формы *uḡrkwl*. Есть и следующий аргумент: основа перфекта глаголов спряжения *-h(-e)* — *uḡhkw*, *rkwhw*, *kwkw*, *hghkw*, *kwrkwhw* — не характеризовалась звуком *g* (č). По закону аналогии сходные с приведенными глаголы также утрачивали слог *-hg(ec)*. Не только глаголы спряжения на *-h(-e)*, но и на *-u(-u)* подпадают под действие того же правила: *ḡhkw* (а не *ḡhghkw*), *uḡkw*, *hghkw*, *qḡkw* *ur-qḡkw* и т. д. Именно благодаря этим двум факторам причастный аффикс *-hgkw(ece-al)* трансформировался в *-kw(eal)*. В V веке между этими двумя формами не было залоговых различий. Изучение вопроса показывает, что одна и та же форма может иметь и активное, и пассивное значение.

Հնդկական խնդրանքով հնդկաժի հոնորար փա-
խանցվում է հնդկաշաղթից առածները օգտագործելիս:
Ֆոնոլոգիա: